


Եվրոպական տարածաշրջանի երկրների բանկային համակարգի որոշ մակրոցուցանիշների անհամամասնությունների էկոնոմետրիկ վերլուծություն

Սույն աշխատանքի նպատակը եվրոպական տարածաշրջանի 45 երկրների բանկային համակարգերի ցուցանիշների համեմատական վերլուծությունն է՝ դրանց միջև անհամամասնությունների բացահայտման և Հայաստանի Հանրապետության բանկային համակարգի հետ համադրման եղանակներով:

Վերլուծության համար օգտագործված տվյալների պաշտոնական աղբյուրներն են՝ Եվրոպական Բանկային Ֆեդերացիայի¹ 2009 թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ բանկային համակարգի ելակետային մակրոցուցանիշները, Համաշխարհային բանկի մակրոտնտեսական ցուցանիշների² և Վիկիպեդիայի³ վիճակագրությունները, ինչպես նաև արտարժույթի փոխաժեքների տվյալները⁴:

Սույն աշխատանքում ներկայացվող ցուցանիշը առևտրային բանկերի թիվն է: Նշենք, որ ըստ 45 երկրների առևտրային բանկերի թվի և բնակչության թվի շարքերի միջև հաշվարկվել է բարձր կորելացիայի գործակից՝ 0.68 (կետային ամպը՝ Գծ. 1), ինչը խոսում է այն մասին, որ բանկերի թիվը էապես պայմանավորված է բնակչության թվաքանակով:



Գծանկար 1. 45 երկրների գծով բանկերի թվի և բնակչության թվի կետային ամպը

Բանկերի թվի մեծությունը կշռված բնակչության թվի մեջ ենթադրում ենք որպես դրական ցուցանիշ այն իմաստով, որ հանրությանը տրվում է ընտրության իրավունք և ֆինանսական միջնորդության ոլորտում ակտիվանում է մրցակցությունը (Աղյուսակ 1):

¹ Ուղղակի աղբյուրը՝ <http://www.ebf-fbe.eu/uploads/Facts%20&%20Figures%202010.pdf>

² The World Bank: World Development Indicators database, 1 July 2009. Gross domestic product (2008), World Bank. 1-7-2009. Retrieved 2009-10-07.

³ http://en.wikipedia.org/wiki/List_of_countries_by_population


⁴ <http://www.x-rates.com/cgi-bin/hlookup.cgi>

Ըստ 43 երկրների 100 հազար բնակչին ընկնող բանկերի թիվը

Տեղը	Երկիրը	100 հազ. բնակչ. ընկնող բանկերի թիվը
1	Մոնակո	113.7307
2	Լիխտենշտեյն	41.77807
3	Լյուքսեմբուրգ	29.67737
4	Կիպրոս	19.42246
5	Ավստրիա	10.2086
6	Ֆինլանդիա	6.073146
7	Անդորրա	5.946576
8	Մալթա	4.600863
9	Շվեյցարիա	4.175754
10	Նորվեգիա	3.005229
11	Դանիա	2.692088
12	Գերմանիա	2.592838
13	Իռլանդիա	1.795421
14	Մոնտենեգրո	1.762821
15	Լեհաստան	1.684687
16	Իտալիա	1.305926
17	Լատվիա	1.289821
18	Իսլանդիա	1.259327
19	Շվեդիա	1.252585
20	Էստոնիա	1.193917
21	Սլովենիա	1.074756
22	Բելգիա	0.942089
23	Բոսնիա և Հերցոգովինա	0.79639
24	Իսպանիա	0.7654
25	Ռուսաստան	0.760957
26	Խորվաթիա	0.721524
27	Հայաստան	0.679432
28	Հունաստան	0.584329
29	Նիդերլանդներ	0.560998
30	ՄԹ	0.535414
31	Ադրբեջան	0.515562
32	Ալբանիա	0.500782
33	Ֆրանսիա	0.483668
34	Սլովակիա	0.479269
35	Հունգարիա	0.46939
36	Վրաստան	0.428314
37	Սոլովովա	0.423088
38	Պորտուգալիա	0.404222
39	Բուլղարիա	0.396631
40	Չեխիա	0.371188
41	Ուկրաինա	0.383293
42	Սերբիա	0.345178
43	Լիտվա	0.330426
44	Ռումինիա	0.195693
45	Թուրքիա	0.062017

Հայաստանը 0.68 ցուցանիշով զբաղեցնում է 27-րդ տեղը (Աղյուսակ 1): Հատկանշական է, որ կտրուկ փոքր ցուցանիշ է գրանցվել Թուրքիայում՝ 0.06: Մյուսն կողմից նկատենք, որ առաջին չորս երկրները գերփոքր բնակեցված են, ինչի արդյունքում այստեղ ցուցանիշները էապես մեծ են: Այս հիմնավորմամբ, շրջանցելով այս չորս երկրները ստացվում է որ լավագույն եռյակը զբաղեցնում են Ավստրիան, Ֆինլանդիան և Անդորան: Այս ցուցանիշով Հայաստանին գերազանցում են նաև Շվեյցարիան, Նորվեգիան, Մալթան, Դանիան, Գերմանիան, Լատվիան, Էստոնիան և այլն, ինչը նույնպես վկայում է այս ցուցանիշի մեծ լինելու դրական որակի մասին, հաշվի առնելով այս երկրներում ֆինանսական միջնորդության համեմատական կայացվածության անվիճելիությունը:


Եթե երկրում մեկ անձին ընկնող բանկային ակտիվները համարենք ֆինանսական միջնորդության որակական ցուցանիշ, ինչը ընդունված է նաև մասնագիտական գրականության մեջ⁵, ապա հատկանշական է նաև, որ ըստ 45 երկրների այս ցուցանիշը նույնպես բարձր կորելացված է 100 հազ. բնակչին ընկնող բանկերի թվի հետ՝ 0.87: Վերջինս լրացուցիչ հիմնավորում է, որ 100 հազ. բնակչին ընկնող բանկերի թվի մեծությունը որոշակի սահմաններում դրական ցուցանիշը է: Ներքոհիշյալում ներկայացնենք այս ցուցանիշների տվյալների ամպը:



Գծանկար 2. 44 երկրների գծով 100 հազ. բնակչին ընկնող բանկերի և մեկ բնակչին ընկնող բանկային ակտիվների կետային ամպը

⁵ T. Beck , N. Van Loayza and R. Eric Levine, Financial Intermediation and Growth: Causality and Causes, World Bank Group, Financial Sector and Macroeconomic & Economic Growth, Report Number: wps2059, 1999.

Այժմ նշված որոշակի սահմանների և այդ սահմաններում Հայաստանի դիրքի մասին. ներքոհիշյալ հիստոգրամում (Գծ. 3) պատկերված է 100 հազ. բնակչին ընկնող բանկերի թվի բաշխվածությունը և կուտակային կորը: 43 երկրների գծով 63%-ը ներառված են 0 – 1.4 սահմանում, ընդ որում, եթե դիտարկումից հեռացնենք վերը նշված 4 գերփոքր բնակչությամբ երկրները, ապա այս ցուցանիշը կաճի մինչև 67%: Հայաստանը բաշխման մեջ կուտակային կորի 40%-ի շրջանում է, ինչը կարելի է համարել ոչ բացասական ցուցանիշ:



Գծանկար 3. 43 երկրների գծով 100 հազ բնակչին ընկնող ցուցանիշի բաշխումը

Նույն օրինաչափությունը ցույց է տալիս նաև նկարագրողական վերլուծությունը. 100 հազ. բնակչին ընկնող բանկերի թիվը 41 երկրների գծով (չեն ներառվել 4 գերփոքր բնակեցված երկրները) միջինը՝ 1.56, մեդիանը՝ 0.76: Վերջինս լրացուցիչ խոսում է այն մասին, որ Հայաստանում 0.68 ցուցանիշը փոքր չէ:

Հետևություն 1

Հաշվի առնելով վերոհիշյալը, կարելի է ասել, որ եվրոպական տարածաշրջանում ուսումնասիրված 43 երկրների ուսումնասիրված ցուցանիշները և նրանց փոխառնչությունները, Հայաստանի Հանրապետությունում բանկերի թիվը ներկայումս փոքր չէ և կտրուկ **անհամամասնական չէ** նշված երկրների միջին պահվածքին: